*ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

**<u>Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմնի հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար</u>**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող ,,Մարտունու ծննդատուն,, փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1.Բարձրագույն բժշկական կրթություն, առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա ստաժ:

2.Իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր/

3.Կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն,

4 աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝

ա/ ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման,

բ/ անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման,

գ/ աշխատանքների բաշխման,

դ/ կարգապահական պատասխանատվության,

ե/ խրախուսանքի միջոցների կիրառման.

5. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

6.Ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝ Գույքի, ֆինանսական միջոցների տնօրինման և գործարքներ կնքելու կարողություններ:

7.Բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում:

8. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն

9. Մրցույթը կանցկացվի՝

1. <<Մարտունու ծննդատուն>> ՓԲԸ - 2014թ. սեպտեմբերի 23-ին, ժամը՝ $11^{00}$ -ին

10. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Գեղարքունիքի մարզպետարան են ներկայացնում՝

1/ դիմում.

2/ մեկ լուսանկար 3 x 4 չափի.

3/ քաղվածք՝ աշխատանքային գրքույկից.

4/ ինքնակենսագրություն.

5/ անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի /արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի/ պատճենները.

6/ քաղաքացու ցանկությամբ՝ հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

7/ բնութագիր՝ վերջին աշխատավայրից /եթե կազմակերպությունը չի լուծարվել/.

8/ կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը /ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ/, որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է բաժիններ կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:

11. Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագրի և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը $9^{00}$-$13^{00}$, բացի շաբաթ և կիրակի օրերից:

*Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2014թ. օգոստոսի 22-ը:*

*Մրցույթը կկայանա Գեղարքունիքի մարզպետարանի շենքում :*

*Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ անձնակազմի կառավարման բաժին, հեռ՝ 0264 2 43 76:*

*ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ*